Կանանց մտահոգիք մը մետաքսի զգեստի վրայ.

Կարծեմ անօգուտ բան չէ գիտնալը թէ քանի՞ քանի կենդանիք իրենց բոլոր ջանքը, իրենց հիւթը ու նաև իրենց կեանքն ալ կու տան մէկ մետաքսէ հագուստ մը պատրաստելու համար։

Քրիստոսի 17 թուականին Տիբերիոս կայսր արգիլեց որ մետաքսէ լաթ չհագնին. և 173 թուականին Մարկոս Աւրելիոս կայսեր իշխանութեանը ատեն՝ միայն մեծ իշխանաղուն խաթունաց հրաման կար մետաքսէ զգեստ հագնելու։ Իսկ 218 թուականին՝ առջի մետաքսէ զգեստ հագնողը եղաւ Ելիոգաբալ կայսրն՝ ասորի ազգաւ։ Եւ 270 թուականին Աւրելիանոս կայսր հրաման չէր տուած իր կողակցին մետաքսէ զգեստ մը հագնելու. վասն զի անչափ սուղ էր ան ատեն մետաքսը՝ որ ոսկւոյ հաւասար կշեռքին թաթը կը դրուէր։ Եւ դեռ ինչուան մեր ատեններս ալ՝ շատ հեղ մետաքսէ հագուստն նշան կը համարի կնոջ մը ազնուականութեան։

Շատոնց ծանօթ է որ մէկ առանց երկայն քղանցքի մետաքսէ հագուստի մը համար պէտք է 15 ½ կանգուն նիւթ, լայնութիւնը ըլլայ ¾. իսկ թէ որ նիւթը ⅞ կանգնոյ լայնութիւն ունենայ, ան ատեն կ'ուզէ 26 կանգուն նիւթ, մանաւանդ թէ որ հագուստն ալ երկայն քղանցքներ ունենայ. յայտնի ալ է ու իբր սովորական բան մը, որ կանանց դերձակը շատ կը փափագի որ գոնէ հարկաւորէն կանգուն մը աւելի նիւթ ձեռք բերէ. ուստի ամեն տիկնայց յորդորելով խրատ կու տայ ու կ'ըսէ. Լաւագոյն է, տիկինս, մէկ կամ երկու կանգուն նիւթ աւելի գնել ու մկրատին նուիրել, քան թէ խնայելու մտքով ըզգեստին վայելչութեան մեծ ցնաս հասցընել։

Հիմայ մէկ թեթև մետաքսեայ նիւթէ մը շինած հագուստին ծանրութեան կշիռքն է 8 ½ ունկի կամ ունծայ. ուստի մէկ ծանր նիւթէ մը շինածին ծանրութիւնն է մէկ լիպրա ու 2 ունկի, թէ որ հետը հաշուել ուզենանք ինչ որ ներկի ատեն կը պակասի մետաքսէն. (որ սովորաբար դեղին կը ներկուի կապարի քացխատով) և կը պակսի ամեն մէկ լիպրային մէջ 2½–4 ունկի։ — Ուրեմն միտ դնենք. կէս ունկի մետաքս ստանալու համար՝ պէտք են 90–95 բոժոժ շերամի. դուրս հանելով ուրիշ կորուստները ու շերամի որդերու պատահած հիւանդութիւնները, տակաւին մէկ լիպրայ մետաքս ունենալու համար՝ հարկաւոր է 2880–3040 շերամի բոժոժ։ Ապա մէկ թեթև մետաքսէ հագուստի մը թէ որ կ'երթայ 8 ունկի մետաքս, որուն համար 1445–1547 բոժոժ պէտք է, մէկ ծանր մետաքսէ հագուստի մ'ալ որ կը կշռէ 1 լիպրա ու 1⅞, պէտք կ'ըլլայ 3177–3348 շերամի որդ, որ ան բոժոժները պատրաստեն։ Թէ որ ամեն պատահած ցնասներն ու կորուստներն ալ մէկտեղ հաշուենք, պէտք է որ դնենք գոնէ 4000 շերամի թրթուր։ Իսկ 4000 շերամի թրթուր հանելու՝ հարկաւոր է ⅛ մասն ունկիի շերամի հաւկիթ, թողլով ամեն տեսակ ցնաս ու դժբախտութիւն. կամ որ նոյն է՝ պէտք են 10 զոյգ շերամի թիթեռնիկաց հաւկիթներ։

Մէկ շերամի թրթուր մը միայն իր կենացը մէջ կը սպառէ ուտելով մէկ ունկիէ աւելի թթենւոյ տերև. ուստի 4000 թրթուր մէկտեղ կ'ուտեն 250 լիպրա թրթի տերև։ Եւ որովհետև ասալ ծանօթ է՝ որ մէկ 20 տարեկան ուժով ծառ մը տարին 90 լիպրա տերև կու տայ, և թէ որ հոս ալ վար թափածը և կորուստները մէկտեղ հաշուենք, ան ատեն պէտք է ունենալ երեք հատ 20 տարեկան ուժով ծառ. բայց ան ատեն ալ դեռ կը ցնասուին ծառերը, թէ որ մէկ տարուան մէջ անոնցմէ այնչափ տերև առնել ուզենանք, որով միւս տարին ալ չենք կարող առնելու. ապա որպէս զի միշտ ամեն տարի կարենանք նոյնչափ տերև հանելու առանց ծառերուն ցնաս տալու, պէտք է որ ու-

նենանք 4 կամ 6 ուժով 20 տարեկան ծառեր. և կամ վեց անգամ նոյնչափ թուով 12 տարեկան ծառեր, այս ինքն 24 ծառ։ Սակայն այսու ամենայնիւ աս հում մետաքսը հանելու համար աշխատաւորին վարձքը քիչ է. վասն զի մէկ լիպրա մետաքսի համար՝ թէ որ որդերը մէջը չորցած ըլլան՝ կ'ուզէ 344 բոժոժ. ու թէ որ դեռ կենդանի ըլլան որդերը՝ կ'ուզէ 250 բոժոժ. տասը լիպրա բոժոժէ (կարժառի վրայ առնելով անոնց մետաքսը), կ'ելլէ միայն մէկ լիպրա մը հում մետաքս. իսկ աշխատաւորը որչափ ալ սուղ կարենայ վաճառել, տակաւին մէկ լիպրա չորցած բոժոժը պիտի վաճառէ իբր 22 ֆրանգ, և մէկ կարժ ըրած մետաքսը 30 ֆրանգ։ Աս ըլլալէն ետքը մետաքսի գործարանին գլխաւորը՝ որ զմետաքսը կ'ընտրէ ու կը զատէ առէչի ու թելի, առէչի մետաքսի մէկ լիպրայն կը վաճառէ 45 ֆր. և թելի մետաքսի լիպրայն 40 ֆր։ Իսկ մէկ լիպրայ մետաքսով բանած դիպակը՝ միջին հաշուով կ'արժէ 85 ֆրանգէ սկսեալ ինչուան 320 ֆր։ Եւ այսպէս հում, մաքրած և բանած մետաքսն իրարու հետ համեմատութիւն կ'ունենան՝ ինչպէս կը համեմատին 12։ 18։ 34. կամ ինչպէս 12։ 18։ 130. և կամ 1։ 1 ½։ 3։ և կամ 1։ 1 ½։ 12ի հետ։

Հոս արժանի է որ դեռ տեղւոյ վրայ ալ խօսինք. 1 ⅛ մասն ունկիի մը շերամի հաւկիթներէ ելած թրթուրները իրենց կենացը առջի վիճակին մէջ կը բռնեն 1 ½ քառակուսի ոտնաչափ տեղ, երկրորդին՝ կը բռնեն 2 ½ ք. ոտ. երրորդին՝ 6 ¾, և չորրորդին՝ 7 քառ. ոտ։ — Վեց 20 տարեկան ծառեր մէկ պարտիզի մը մէջ կը բռնեն ¼ արտավար դետին. իսկ թէ որ պարտիզին շրջապատ ցանկին մօտ դրուին՝ կը գրաւեն միայն ⅛ մասը մէկ արտավար երկրի մը։

ԵՐԿԻՐ

Մոլորակիս անձուկ սահմաններէն առանց դուրս ելլելու, ինչ փոփոխ տեսարաններ, ինչ մեծ և վսեմ երևոյթներ չի ցուցներ մեզի բնութիւնն։ Շերջող աստեղաց մէջ, այն որոշեալ գնտերէն մէկն՝ յորում մեք կը բնակիմք, աւելի առանձնաշնորհեալ կ'երևայ. քիչ ցուրտ, և քիչ հեռի քան զերևակ, քան զլուսնթագ և քան զհրատ, և դարձեալ քան զարուսեակ և զփայլածու քիչ այրող է, որոնք ալ շատ մօտ կ'երևան լուսոյ աստղին (արևուն)։

Նոյնպէս, որպիսի չքեղութեամբ չփայլիր բնութիւնն երկրիս վրայ։ Անաղօտ լոյս մը սփռուելով արևելքէ մինչև յարևմուտս, անդադար յոսկեգոյն կը ներկէ երկրիս կիսագունտները. թափանցիկ և թեթև տարերք կը շրջապատեն զայն, հեշտ և բեղմնաւոր ջերմութիւն մը կը կենդանացնէ, կը ծնուցանէ կենաց ամենայն սերմանքը. կենդանի և առողջարար ջուրեր միջնորդ կ'ըլլան անոնց պահպանութեան և աճման. բարձրութիւնք երկրիս երեսաց զանազան կողմերու վրայ՝ կ'արգելուն օդոյ շոգիները, և անապառ կը գործեն այս աղբերակները և միշտ նոր. անբաւ խորութիւններ՝ որ զաստղք ընդունելու համար բացուած են՝ կը բաժնեն ցամաքները. ծովուն տարածութիւնն ալ մեծ է ինչպէս երկրիսն. չէ ցուրտ և անարգասաբեր տարր մը, այլ նոր թագաւորութիւն մ' է առջինին պէս հարուստ և բազմազգի։ Աստուծոյ մատն գծած է անոնց սահմանները. եթէ ծովն յառաջէ արևմտեան ափանց վրայ, մերկ կը թողու արևելեանները. այս անհուն ջրոյ զանգուածն անգործ չինքենէ՝ երկնային մարմնոց շարժմանց կը հետևի. զուգահաւասարի մակընթացութեան և տեղատուութեան կանոնաւոր ճաճմունքներով, կը բարձրանայ և կ'իջնայ գիշերուան աստղն հետ, (լուսնի), և աւելի կը բարձրանայ երբ գիշերոյ աստղն